«Այո՝ —պատասխանեց խանը՝ —այդ աղէտալի արշաւանքը՝ որ շատ խաղաղ երկրագործների տունը աւերեց՝ շէյխի մեծ սխալն էր։ Դա պատրաստվեց հայոց դէմ՝ հայոց խնդիրը ջնջելու համար և ցոյց տալու Եւրոպային՝ որ քրդերը մի զինուորական ոյժ են կազմում։ Բայց շէյխը շուտով համոզվեց՝ որ քրդերը առանց հայերի երբէք չեն կարող լինել գոյութիւն ունենալ։ Պէտք է ճշմարտութիւնը ասել՝ որ շէյխը. իւր սխալը չը կարմրացրեց. նա ոչ մի հայի արիւն չը թափեց և ամեն տեղ ցոյց տուեց իւր պաշտպանութիւնը։ Պարսից հպատակներին փոխանակ պաշտպանելու անգթաբար կոտորեցին Մագուայ խաները՝ միայն կողոպտելու հա-

---

շեռալ գիւղի ձիերի երամակը, Աւշն էլ փախցրեց իւր սիրած աղջկան, որի հետ ապրում է այժմ Թադէյի վանքի գիւղում։ Զի բաւականանալով այսքանով Աւշն ցանկանում է այդ աղջկայ հետ օրինաւոր ամուսնութեամբ պսակվել, որին սէրտէրը չէ համաձայնում։ Խնդիրը հասնում է Համզо աղին, որը քննելով գործը տեսնում է որ տղայի եւ աղջկայ կողմից արդարք չը կայ. անմիջապէս պսակելու հրամայն է ուղարկում քահանային, հակառակ դէպքում, սպառնում է նորան միրուքից եւ փիլոնից զրկել եւ դուրս արեցնել քահանայագործութիւնից։ Տէրտէրը սարսափած այդ ինքնակոչ քուրդ կաթողիկոսի հրամանից դիմում է վանահօր, որը ընծայով եւ աղաչանքով համոզում է Համզо աղին սպասել մինչեւ թուղթ գրեն Հաստօրնակ տեղեկանան, թէ առեւանգած աղջիկը ազատ է արդեօք, մարդ չունի։